ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը N 1465-Ա	*Տեսակը* Հիմնական
Տիպը Որոշում	*Կարգավիճակը* Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.10.09/43(218) Հոդ.984	*Ընդունման վայրը* Երևան
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը* 12.09.2002
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը* 20.09.2002
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը* 24.09.2002
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.10.2002	*Ուժը կորցնելու ամսաթիվը*

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
24 սեպտեմբերի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2002 թվականի N 1465-Ա

«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. «Արարատցեմենտ» բաց բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող 317003 բաժնետոմսը՝ յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով, ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցնել «Ռոբերտո» բելգիական կազմակերպությանը (այսուհետ՝ գնորդ):

2. Սահմանել մասնավորեցվող բաժնետոմսերի գինը՝ 200 հազ. ԱՄՆ-ի դոլար, որը գնորդի կողմից ենթակա է վճարման մասնավորեցման հատուկ հաշվին՝ մասնավորեցման պայմանագրի ստորագրման օրվանից 3 բանկային օրվա ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարին՝ գնորդի հետ կնքել մասնավորեցման պայմանագիր՝ հետևյալ էական պայմաններով՝

ա) գնորդը պարտավոր է առաջիկա 3 տարվա ընթացքում ապահովել «Արարատցեմենտ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ցեմենտի արտադրության ծավալները, բայց ոչ պակաս, քան

2001 թվականի ցեմենտի արտադրության ծավալները.

բ) գնորդը պարտավոր է մասնավորեցման պայմանագրի ստորագրման օրվանից 3 օրվա ընթացքում «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել «Իտերա» միջազգային էներգետիկական կորպորացիայի կողմից մատակարարված բնական գազի դիմաց ապրանքային վճարումների գծով առաջացած պարտքերից՝ 6,866 մլն ԱՄՆ-ի դոլարի արտարժութային վճարման չափով (9,7 մլն ԱՄՆ-ի դոլարի ապրանքային մատակարարմանը համարժեք)՝ կնքելով պարտքից ազատման համապատասխան գործարք.

գ) «Արարատցեմենտ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրում գնորդի սեփականության իրավունքը գրանցվում է բաժնետոմսերի գնի վճարումից և սույն կետի «բ» ենթակետի պահանջը կատարելուց հետո:

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին՝ 10-օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Արարատցեմենտ» բաց բաժնետիրական ընկերության կողմից օգտագործվող 457,5 հեկտար հողատարածքի վարձակալության պայմանագրի կնքումը՝ 49 տարի ժամկետով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Արարատցեմենտ» բաց բաժնետիրական ընկերության՝ վարձակալված հողատարածքների նկատմամբ վարձակալության իրավունքի, ինչպես նաև շենքերի և շինությունների սեփականության իրավունքի պետական գրանցումը:

6. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ քննարկել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել «Արարատցեմենտ» բաց բաժնետիրական ընկերության ջրօգտագործման, ջրահեռացման, արտանետումների սահմանաքանակները և նրա հետ կնքել համապատասխան պայմանագիր:

7. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարին ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը պարտքից ազատելու դիմաց ապահովել հետևյալ հատուցման մեխանիզմով համապատասխան գործարքների կնքումը, հաշվապահական հաշվառման մեջ դրա արտացոլումը և հաշվետվություններ ներկայացնելը՝

ա) «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել մատակարարված գազի դիմաց 6077023 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտավորությունից և Հայաստանի Հանրապետությանը՝ առանձին սպառողների համար օրենքներով ու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված 50 տոկոս զեղչ սակագներով 1999 թվականի հուլիսի 1-ից մինչև 2001 թվականի դեկտեմբերի 31-ը մատակարարված բնական գազի դիմաց առաջացած վնասների փոխհատուցման գծով 788.977 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի պարտավորությունից.

բ) «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել իր և «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց 6077023 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտքերից՝ «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության մասով՝ փոխադարձ հաշիվներով ձևակերպելով որպես դեբիտորական պարտք.

գ) «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց 6077023 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտավորությունից.

դ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է Հայաստանի Հանրապետությանն ազատել հանրապետական ենթակայության բյուջետային հիմնարկների կողմից մինչև 2002 թվականի հունվարի 1-ը սպառած էլեկտրական էներգիայի գծով՝ երկկողմանի հաստատված ակտերով մինչև 2 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտքերից, «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց 300,22 մլն դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտքից և «Երևանի ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 6077023 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի փաստացի մնացորդի չափով պարտքից.

ե) «Երևանի ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է Հայաստանի Հանրապետությանն ազատել հանրապետական ենթակայության բյուջետային հիմնարկների կողմից մինչև 2002 թվականի հունվարի 1-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների գծով՝ երկկողմանի ակտերով հաստատված 229,3 մլն դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտքերից, առանձին սպառողների համար օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված զեղչ սակագներով 1998-2001 թվականների ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վնասների փոխհատուցման գծով 151 մլն դրամ պարտավորությունից.

զ) «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվում է Հայաստանի Հանրապետությանն ազատել հանրապետական ենթակայության բյուջետային հիմնարկների կողմից մինչև 2002 թվականի հունվարի 1-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների գծով՝ երկկողմանի ակտերով հաստատված 102,3 մլն դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պարտքերից և առանձին սպառողների համար օրենքներով ու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված զեղչ սակագներով 1998-2001 թվականների ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վնասների փոխհատուցման գծով 197,92 մլն դրամ պարտավորությունից.

է) սույն կետի «դ» ենթակետով «Երևանի ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը պարտքից ազատման գումարի և սույն կետի «ե» ենթակետում նշված փոխհատուցման գումարի տարբերությունը համարվում է բնակչության պարտքերի դիմաց պետության կողմից տրվող փոխհատուցում:

8. Հայաստանի Հանրապետության նախարարներին, մարզպետներին, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր գերատեսչությունների ղեկավարներին՝ ապահովել իրենց համակարգի բյուջետային հիմնարկների կողմից սույն որոշման 7-րդ կետի «դ», «ե» և «զ» ենթակետերում նշված համապատասխան պարտքերի մարման մասին ակտերի ստորագրումը և իրենց սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքներ հաշվետվություններ ներկայացնելը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2002 թ. սեպտեմբերի 20
Երևան